

**Տ. ՏԻՐԱՆ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ**

Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(23 մայիսի 2004 թ.)

«Ուխտանալու քարոզչություն»:

Օրհնեալ որ գասդ յսևուն Տեսուն»:

(Նովի. ԺԲ 13)

Միրելի հավարացյալ ժողովուրդ,

Տիրոջ Նամբարձման փոռնին հաջորդող այս կիրակին բացառաբար մեր նկեղեցական Տոնացույցում է հայտնի Երկրորդ Ծաղկագարդ անվամբ:

Դեռևս ԺԱ դարում Գրիգոր Բ Վկայասեր Կաթողիկոսի սահմանաձև այս փոռը կապված է զուրպ ազգային մի հիասքանչ ավանդության հետ: Ըստ այսմ երբ մեր բազմաչարչար Լուսավորիչ Նայրապետը գրկվում էր մահահուր Վիրապում, մի հրեշտակ ամեն օր այցելում էր նրան: Եվ պարահում է, որ Նամբարձման չորրորդ օրը հրեշտակը չի հայտնվում: Սակայն հաջորդ օրը երանելի Նայրապետի այն հարցին, թե ինչո՞ւ նախորդ օրն իրեն այցի չի եկել, հրեշտակը պարասխանում է, որ Տիրոջ Նամբարձումը փոռնելու համար հրեշտակների ինը դասերը հաջորդաբար փոռախմբություն են կատարում, և ինքը, լինելով չորրորդ դասից, այդ օրը չի ցանկացել իր դասի ուրախություններից բացակայել:

Այս օրվա խորհուրդը շարժում է մեզ նմանություններ ունի Առաջին Ծաղկագարդին, քանի որ ընթերցում ենք Առաջին Ծաղկագարդի և այն Ավետարաններն ու աղոթքները: Սակայն եթե բուն Ծաղկագարդը խորհրդանշում է Քրիստոսի հանդիսավոր մուրբը Երուսաղեմ, ապա Երկրորդ Ծաղկագարդը խորհրդական կերպով հրեշտակների ուղեկցությամբ Վերին Երուսաղեմ Նիսուսի մուրքի հիշատակությունն է:

Տիրոջ՝ Երուսաղեմ հաղթական մուրքի պարմությանն անշուշտ բաջաձանոթ ենք բուրբ. գարնանային մի այսպիսի հրաշալի օր էր, երբ մեր Տերը, նստած ավանակի վրա, ժողովրդի խումբ բազմության ուղեկցությամբ մտնում էր քաղաք: Երուսաղեմ մուրքի արտաքին, պարմական նկարագրությունը հեղափոխում էր արտահայտությունը պիտի գրկեր առաքյալի այս մի քանի փողերի մեջ: Սակայն որքան՝ զգացմունք, ինչպիսի՞ ոգևորություն է դրել ավետարանիչը Փրկչի հաղթական մուրքի պարմության իր այս համեստ շարադրանքի մեջ: Գրական միջոցներն ու հնարքները խիստ սահմանափակ են լավագույնս արտահայտելու համար փեղի ունեցած նշանակալի իրադարձությունը: Ճանապարհի փոշուց մշուշապար օղը լցված էր ուրախության, գոհաբանության, հարգանքի բացականչություններով: Արևելյան բնորոշ շերմեռանդությամբ մի հոռ բազմություն մեծ խնդությամբ, օվսանաներով և արմավենու ոսքերով է դիմավորում խոստացված Արքային, և շարեր մինչև

իսկ իրենց հանդերձներն են փոռում Նրա ուրբերի առջև ու բարձրաձայն աղաղակում. «Օրհնութիւն որդոյ Դաթի, օրհնեալ որ գայ յանուն Տեառն, օրհնութիւն ի բարձունս»:

Սակայն այդ պահին իսկ մի ինչ-որ փարօթիկակ անհանգստություն կար Արքայի հոգում:

Ինչ էր այս ամենը կշանակում:

Տխուս էր աստվածային ամենագիտությամբ հասկանում էր, որ այս ժողովուրդը, ով Իրեն այսօր մեծարում և փառաբանում է, օրեր անց իր Արքային պիտի մարտի խաչելության: Չէ՛ որ ավերարանիցն իսկ վկայում է այդ մասին՝ ասելով. «Յուրայինների մոտ եկավ, բայց յուրայինները չընդունեցին» (Նովի. Ա 11):

Առհասարակ այս աշխարհի թագավորները հաղթանակած էին փուն դառնում ուրիշի արյունը հեղելով, այլոց փունն ավերելով և կայքն ավարելով: Եվ նման մտածողությամբ ևույն ժողովուրդը միմիայն այդ հանգամանքները փոխելով էր թագավորին իբրև հաղթողի ընդունում՝ փառքի արժանացնելով նրան: Բայց այս մտածողության մեջ որևէ կերպ չի փոխվում Տիրոջ թագավորական մուրբը և իբրև հաղթող արքայի թագավորաբար ընդունումը ժողովրդի կողմից: Նույն այդ ժողովուրդը, որ աշխարհի թագավորներից ակնկալում էր փառք իր ազգին, բարեկեցություն իր ժողովրդին և ընդլայնում իր հայրենի սահմանները՝ այլ ազգերի հողերի հաշվին, Քրիստոսից միանգամայն այլ ակնկալություն ուներ: Քրիստոս երբեք արյուն չհեղեց, ոչ մեկին չթալանեց, ոչ մի ազգի չստրկացրեց, այլ, ինչպես Ինքն է ասում՝ «Իմ թագավորությունն այս աշխարհից չէ», այն իմաստով, որ Իր թագավորությունը երկնային իրողություն է: Նաև այդ թագավորությունը գրնեկու՝ ճանապարհը ցույց փվեց՝ ասելով՝ «ի ներքս ի ձեզ է»:

Այսու, Տիրոջ թագավորությունը հոգիների թագավորություն է, և Նրա փարած հաղթանակը հոգիների մեջ փարած հաղթանակ է, արքայությունը՝ երկնային, որ ոչ մի կյուրական բան չի պարունակում իր մեջ: Ուստի եթե աշխարհի թագավորները հաղթանակ էին ապահովում ուրիշի արյան գեղով, ապա Քրիստոս ևույն այդ հաղթանակն ազգերին բերեց Իր իսկ կենարար Արյան հեղումով: Եվ այս էր ամենամեծ փարբերությունը աշխարհի թագավորների և մեր Տիրոջ՝ իբրև երկնային թագավոր լինելու հանգամանքի մեջ:

Եվ իրապես, Տիրոջն արմավենիներով դիմավորողների ամբոխն օրեր անց հենց իր անօրեն ձեռամբ իջեցրեց ավանակից և փշե պսակով զարդարեց լուսեղեն ճակափրը, ովքեր բնավ «ուրանալու անգամ հեփին միփք չունեին», վկայեցին, թե չեն ճանաչում այդ մարդուն: Եվ, վերջապես, «Դու ես կենդանի Աստուծո Որդին» դավանողները մարդկային ապերախության ողջ ուժգնությամբ պախարակեցին դառնության ժամին՝ ասելով. «Եթե Աստուծո Որդի ես, իջիր այդ խաչից»:

Բայց մենք այսօր, որպես նոր Իսրայել, իբրև նոր ժողովուրդ և Տիրոջ խորհրդական մարմնի՝ քրիստոսակիր Եկեղեցու անդամներ՝ Իր իսկ կենարար արքամբ գնված, ականապես եղանք Տիրոջ հրաշափառ Նարության, Չիթենյաց լեռան վրա առաքյալների հեփ վկայեցիք երկիք համբարձվող Տիրոջ մասին:

Եվ այսօր, Երկրորդ Ծաղկազարդին, Տխուս, նստած ամպերի վրա, ևույն խոնարհությամբ ու հեզությամբ շարունակում է Իր ճանապարհը: Զգում են փարափվել է նախկին անհանգստությունը աստվածային Իր հոգուց, ճառագում է ներքին հրաշափառ Նարության

միջոցով անցած հանդարտությունն ու խաղաղությունը: Եվ հանկարծ մի պահ կանգ է առնում, նայում գլխիկոր կանգնած մարդուն և հազիվ լսելի ծայնով իմաստունի բերանով մրմնջում. «Սխալվեցիր. այն Աստուծոն, որ դու ես ստեղծել, կարող ես մեռցնել, բայց այն Աստված, որ քեզ է ստեղծել հողից, Անմահ է»:

Ճերմակ ավանակը դարձյալ նույն հանդարտությամբ շարունակում է իր ընթացքը: Սակայն այս անգամ Տերը մտնում է Երուսաղեմ, երկնային թագավորություն՝ Իր հերևից տանելով արդարության ծարավի բազմահազար պապակ արդար հոգիներ: Տանում է մի ուրիշ արքայություն, որի Արքայի իշխանությունը այս աշխարհից չէ, ուր ոչ գող կա, և ոչ էլ ուրիճներն են ապականում արքայության անասց հավիտենական հարսությունը:

Նենց այդ արքայության մասին է ակնարկում Ղուկաս ավերարանիչը՝ ասելով. «Աստուծո արքայությունը դրսից րենասանելի կերպով չի գալիս, և չեն ասի, թե՛ անավասիկ այստեղ է կամ այնտեղ, որովհետև Աստուծո արքայությունը ներսում, ձեր մեջ է» (Ղուկաս ԺԷ 20-21):

Եվ արդ, սիրելիներ, մեզանից յուրաքանչյուրը հենց այսօր իր սիրտը փոքրիկ Սիոնի վերածելով՝ խանդաղարանքով ու խանդավառությամբ թող ընդունի Քրիստոս՝ հավիտենական Թագավորին, որ հոգիների խաղաղության պարզևարուն է: Սիրելիներ, ուրեմն ծաղկազարդենք այսօր մեր սրտերը, սակայն ոչ թե ձիթենու և կամ արմավենու ճյուղերով, այլ Նոր փառքով երկինք համբարձված Փառավորյալ Փրկչի սիրո ու հեզության առաքիլություններով, անսուտ ուրախությամբ դիմավորենք Փրկչին՝ ասելով. «Ովսանա բարձրելոյն: Օրհնեալ որ գատղ յանուն Տեանն»:

Ճնորհք, սէր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեւեանդ. Ամէն: